


Հ Ա Ս Տ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYOS

(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ԵԳԻՊՏՈՍ

Տարեկան դրո-ոգը 30

ԱՐՏԱՍԱՅՄԱՆ

Տարեկան ֆրանկ 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍԵՐՈՒ փոխարէն վճարում է գրեթէ պիտի ըլլան .

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱԹԵՐԹ

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց հարաւ պէտք է դիտել նմազարութեան հասցեով քերթիս Մասակարարին, որ է՝

ԳԵՌՈՐԳ ՓԱՐՈՍԵԱՆ

Չի հրատարակուած ձեռագիրները եւ յի՛նք տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է. իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր հաւանաւայնութեամբ :

ՀԵ ՇՐԱՏԱՐԱՎՈՒԻ ՉՈՐԵՔԵՍԱԹԻ ՕՐԵՐԸ ԶՈՐԱՄԱՊԵՐԵՆԻ ԵՒ ԶՈՐԱՄԱՊԵՐԵՆԻ ԵՒ ԶՈՐԱՄԱՊԵՐԵՆԻ

Հ. Բ. Ը. Միութիւն

- 1. - Կարեւորիւն. 2. Կարեւորիւն գործեր. 3. - Եւրասիական. 4. - Արդիւնք. 5. - Ա. Բ. Տեղեկագիրներ. 6. - Հակառակորդներ. 7. - Հիւսիսարեւմտեան անցումը. 8. - Եւրոպական. 9. - Ապագան 10. - Հ. Բ. Ը. Միութիւնը ընդհանուր գծերով. 11. - Կանոնադրութիւն :

ԱՐԴՒԻՆԻՔ

Հ. Բ. Ը. Միութիւնը, դեռ նոր իր կանոնադրութիւնը հրատարակելու համար - 1906ին - զանազան տեղերէ գեղատեսիլի հարուածներ ուղղուեցան անոր դէմ :

Ոմանք՝ այդ կարեւոր ընկերութեան գոյութիւնը անհարկ կը գտնէին, որովհետեւ իրենց ներքին յոռի եւ վատառողջ նպատակներուն իրողործումին արդեւք կորով էր հանդիսանալ, ու իրենք այլ ևս «հայ տառապանքը» իրենց շահագործումի նիւթ չ'պիտի կրնային ընել : Այս դասուն պատկանողներուն որչափ որ ալ զանազան առիթներով ակնարկուեցաւ առկէ առա՛, բայց դարձեալ յառաջիկային՝ իր կարգին աւելի ընդարձակ պիտի խօսուի :

Ոմանք՝ «ժողովրդականութեան» հակառակ եւ «միապետական» գտան անոր կանոնադրութիւնը տրամադրութիւններն : Ժողովրդականութիւնը բառով է, որով կարգ մը մարդիկ նախ աղէտները և ապա իրենք զիրենք կը խաբեն . . . չարաչար տեսակէն :

Ասոնք իրաւունք ունէին, իմ պատասխանս շատ աննպաստ է իրենց և ժխտական : Այսպէս ըսողները կուզեն որ ամէն տեղ անկարգութիւն և անկայանութիւն տիրէ . որպէսզի իրենց ֆէյժին ուղած ժամանակը եւ թէ պէտք տեսնուի, թիթերին ներս խօսեն և գործունէութիւն ու ազգասիրութիւն ծախեն . . .

Կանոնադրի մը որոշ տրամադրութիւնները ժրէնքներ են . բա՛ւ է որ օրէնքի այդ հատուածները յարգելի գիտցողները պիտի մասնակցին անոր՝ ու երբ անգամ մը կ'ընդունուի այն, օրինադրանքութեան պրծգալի հակումն է միայն որ անոր ուժը եղծանելու ջանքերուն կրնայ մղուիլ . իսկ մեր մէջ օրինադրանքութիւնը . . . ֆաջոքիւն համարողներ չեն պահիր : Ասոնց մասին ալ իր կարգին պիտի խօսուի յառաջիկային, քանի որ հիմա կու հիմայ կանոնադրի որոշ յօդուածով մը, իրենց և ի՛մ ալ առջև՝ դո՛ց են Հ .

Բ. Ը. Միութեան գանձը, մեր ուղած ատեն և ազատօրէն ներս չ'կարեւոր մտնելու համար . . . մինչև որ մեր ալ ժողովական դառնալու կարգը գայ : Եւ տեսէ՛ք թէ ինչ անկարելի գժուարութիւններ պատճ է հարթել ըստ Կանոնադրին :

«Յօդուած 11. - Իւրաքանչիւր վարիչ անգամ պարտաւոր է իր պաշտօնավարութեան իր երաշխիք տալ պարտով կամ Կեդր. ժողովոյ որոշմամբ ընդունուած արժեթղթերով 200 անգլ. ոսկւոյ գումար մը և կամ հաստատուն կալուածի մը վրայ համարձէք երաշխաւարութիւն մը :

«Սոյն աւանդը պիտի գրուի և պիտի մնայ Բրէտի Լիոնէի Գահիրէի Մասնաճիւղի գրամատունը՝ մինչև որ վարիչ անգամին պաշտօնավարութիւնը Լիոնէ. ժողովոյ կողմէն վերջ գտնէ :»

(Իցի՛ն թէ մեր ազգային իշխանութեան ո՛ր և է մէկ ճիւղին մէջ պաշտօն ունեցողներն ալ նմանօրինակ երաշխիքներ տալու պարտաւոր ըլլալին, թէպէտ և այսպիսի երաշխիք մը օրին մէկը իմ երեսփոխան ըլլալու շատ պիտի վնասէ և արդեւք հանդիսանայ՝ բայց հոգ չէ .) Դառնանք մեր նիւթին :

Հ. Բ. Ը. Միութիւնը մարդասիրական ընկերութիւն մ'է Տնտեսագիտական սկզբունքներու վրայ հիմնուած : Մեզմէ շատեր իրանցնէ Տնտեսագիտութիւնը շատ յեղեղած և լսած են, բայց այս մեծիմաստ բառը ստէպ և երբեմն կամուրդալէս շփոթելու ուղած են մեր դպրոցներուն տնտեսաբան հետ . տնտեսներ՝ որոնց օճիքը գրեթէ քիչ բացառութեամբ՝ իւրաքանչիւր կ'ըլլան . . . ի՛մ օճիքին պէս :

Տնտեսագիտութեան դասեր տալու ժամանակը չէ՛ հիմայ . բայց օրինապահութեան հրաւեր կարգալայն պարտաւորութիւն է . . .

Երբ անգամ մը օրինապահութեան հաւանական բարեքները կը շնորհուր և իւրացնել գիտնանք, այն ատեն մեր կարգապահութեանն արտագրութիւնը հազարաւոր բարեքները անխուսափելիօրէն վայելելէ զբրկուելու պատճառ մը չ'պիտի ունենանք :

Այժմ հաշուի առնենք իմ «Տնտեսագիտական» անուանած օտ ամենակարեւոր հաստատութեան առաւելութիւնները և արդիւնքը .

Հ. Բ. Ը. Միութեան առաջին տարեշնորհը ոսկեգօծ է. այնպէս որ տնտեսագիտութեան պատիւ կը բերէ . և մանր թիւերն ու բոլոր կոտորակները և սանդղակները զանց առնելով հանդերձ, հազարներով

ոսկիներու վրայ կրնանք խօսիլ, առանց մեր զբաղմունքուն մէջ անոնց հետքերը անգամ վնասելու զօրաւոր կամ տկար պատճառներ ունենալու :

Խիղիս գործունէութիւն մը ցոյց տուած է Հ. Բ. Ը. Միութիւնը իր նախաքայլերուն մէջ, և նոյնչափ ալ համակրալից ընդունելութիւն գտած է ու մինչև հիմայ ալ այնպէս կը մնայ . հակառակ որ մէկուն միւսին խաթար ու թեւազրանքին հետեւելով իրենց բաժնեւորները դադարեցնողներ ալ եղած են, ու անոնց տեղերը նորից արձանագրուած :

Անցեալ օր՝ ինքզինքը լաւ բացատրելու և ըսածները նոյնչափ լաւ ըմբռնելու կարող բարեկամ մը կըսէր ինձի .

«Եթէ կէս միլիոն ֆր. - մեզայ. ոսկի պիտի ըսէի - ունենամ, մէկ չորրորդը ամենայն հաճութեամբ Հ. Բ. Ը. Միութեան կուտամ, իսկ մէկ սանդղիմը այդ ֆրանքներուն կամ ոսկիներուն, որը որ կուզէք, կը ինայեմ ուրիշ ո՛ր և է ՇԻՆՏՈՒՆՊԱՍՏԱԿԻ, որչափ որ ալ անոնք ամեն առիթէ՛ն օգտուելով իրենց գործունէութիւնը իմաստուն և հաստատուն հիմերու վրայ տրուած ցոյց տալ փորձեն . . .

Ուրիշ մը կը խնդրէր որ «Արշալոյս» ի խմբագրութիւնը հաճի ծանուցանել թէ՛ Հ. Բ. Ը. Միութեան իր բաժնեւորները պիտի եռապատկէ, որովհետեւ ինք համարում գոյացուցած է որ ամեն ընկերութիւններէ և իմբաւորութիւններէ օգտակար և ապահով է Բարեգործականը . Եւ մեր մէջէն ո՛վ արդէն իր ինայողութեան արդիւնքը՝ երբ բարեգործութեան պիտի յատկացնէ, կը տանի քրջահաւաք Պոլսոյին ի պահ կուտայ, երբ անդին Բրէտի Լիոնէն ու նամակատան ինայողութեան սընտուկը գոյութիւն ունին :

Բայց ասոնք երրորդական, նոյն իսկ չորրորդական կարեւորութիւն ունին, մենք Բարեգործականին թիւերը նայինք՝ որոնք ո՛րչափ ճոխ և պարարտ ըլլան, այնչափ Հայաստանի խնդն ու թշուառացուցում ժողովուրդին յոյսը կ'աւելնայ :

Հ. Բ. Ը. Միութիւնը, իր առաջին տարեշնորհին մէջ, ունեցած է 418 անգամ Գահիրէի, 282 Աղէքսանդրիոյ, 28 անգամ Թանթի, 28 անգամ Չիկագոյի, 5 անգամ Իպրահիմիէի, 8 անգամ Յէյլուի, 13 անգամ Ասիոյի, 3 անգամ Բարիլիի, 4 անգամ Վիեննայի, 1 անգամ Սնիվէրի, 1 Հայտնեաց Բարեգ. ընկ. Նիկոսիայի, 9 անգամ, Սինկարաճա Պալի (Հոլանդ .

տական արեւելեան Հնդկաստան) 12 անգամ . Ճիւղութիւն 3 անգամ Հայպէստանի (Հարար, Տերէ Տալա, Մասքաթ) ընդամենը 815 անգամներ :

Ասոնց վճարումները Ա. տարւոյ մէջ . պատահական նուիրատուութիւններով մեկտեղ, և ինչպէս ըսած եմ, դիւրութեան համար մանր մունր կոտորակները չ'պիտի հաշուեմ, հետեւեալն է .

Մտից տուրքերէ 4886 Ոսկի Ե . Ամսականներէ 1172 , , Նուէրներէ 435 , , Արժէթղ . կարոն . 116 , , Գումարը 6609 Ոսկի Տեղիպտ .

Ի՛նչ ըսէք նայիմ այսպիսի կըլորիկ գումարի մը ներքեւ, որ հետեւեալ Հայաստանի պէտքերուն պիտի յատկացուի, ո՛վ հաճոյքով չ'ստորագրէր, որ նոյնը չ'ընէ

Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՀՈՐԵՔԵՍԱԹԻՍ

Յառաջիկայ վարագոյ Ս. Խաչի Կիւրակէն 11 Հոկտ. 908 Գաղաքի Ս. Աստուածանին եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի հանգուցեալ

Տ. ԽԱՉԻԿ ԿԵՐԿԵՐԵԱՆԻ մահուան քառասներային առթիւ, ուստի կը հրաւիրուին հանգուցելոյն ազգականք և բարեկամք ներկայ ըլլալ սոյն տիւրը արարողութեանց :

ԹՇՈՒԱՌՆԵՐԸ

Վիկտոր-Հիւլիօ Եյս հոյակապ գործը քաջամասօթ է հայերու քով . Թըշուառները կարծես մի յաւելուածական մասը կազմած ըլլար Բաֆֆիի գործերուն, եւ անոր ընթացումը մեր մէջ ողջունուած է այն գուրգուրանքով, այն խանդավառ հիացումով՝ որուն որ արժանի է Վիկտոր-Հիւլիօ նման ցեղի մը մէկ զուլի-գործողը :

Կարող գրիչներ, արդէն, մէկէ աւելի անգամներ, գրած են Թշուառներու մասին, որուն յառաջաբանը միայն լոյս տեսած չէր մինչև հիմա՝ հեղինակին քմահաճոյքին կամ ի՛նչ ի՛նչ վերապահութեան ըրեմամբ :

Այդ յառաջաբանը առանձին հատոր մը կաղնելու չափ ընդարձակ է չէր գրուած է, փիլիսոփայական եւ աստուածաբանական ուսումնասիրութիւն

ըր՝ բանաստեղծին յատուկ պերճարան  
 եւ արամագոյն կայծակնացայտ ոճովը  
 գրուած : Այո՛, մարդը չէ կարծես որ  
 կը խօսի այդ էջերուն մէջ, այլ եւ Ա-  
 րամազը ինքն է որ երկինքի բարձուն-  
 քէն պատգամներ կորոտայ, կայլակ-կայ-  
 ծակ կը սեղանէ մըջուն-մահկանացու-  
 ներու գլխուն . . . :

Պիտի ուղի որ գրական հանգէս  
 մը ձեռնարկէր թարգմանութեանը այդ  
 սքանչելագործ՝ եւ մէկ աւելի սեւակե-  
 սով շահեկան՝ յատկաբանին, որուն  
 հրատարակումը որուն évenementն է  
 Ֆրանսական գրական աշխարհին մէջ :

Սպասելով որ աւելի կարող զը-  
 րիչներ այդ թարգմանութեանը կատա-  
 րեն, իմ մասին կը փորձուիմ այսօր-  
 ուան համար հայ ընթերցողին ներկա.  
 յայտնել սիրուն ու զուարճայի անէքտոթ  
 մը :

1861 ին Պիլիպպին երիտասարդ  
 սպարանայտու մը՝ Ալպէս Լաբուա,  
 իր աչիքը յառած էր այն կրանիթեայ  
 ժայռին ուրիշ տարազի մարդարէն իր  
 պատգամները կարճէր : Առատ մը,  
 սովորին հովերը իրեն լուր բերին թէ՛  
 Վիկտոր-Հիւկոյի գիրք մ'աւարտած էր,  
 թշուառները անուշով :

— Թշուառները ինձի՛ պիտի ըլլան,  
 բացառապէս Լաբուա :

Ու անմիջապէս քնարերգական  
 թուղթ մը գրեց Վիկտոր-Հիւկոյի, յայ-  
 տարարելով որ ինք ամեն պայման ինչ  
 էր ալ ըլլայ՝ կ'ընդունի. « տաղանդին  
 հետ պայմանաւորում կարելի չէ » ա-  
 լելիցնելով :

— 250,000 ֆր., կանխիկ, եղաւ  
 Վիկտոր-Հիւկոյի պատասխանը, կարճ  
 ու կարեւր :

Բայց Լաբուա զրամ չունէր եւ  
 250,000 ֆր. ը յաղակէր բան մը չէր.  
 չուարած, բայց խնդրեց մարդ եւ ա-  
 մեն խոչնդոտ ոտնակոխելու միշտ աը-  
 րամադիր, ճամբայ կելլէ եւ մինչեւ  
 Վիկտոր-Հիւկոյի ոտքը կերթայ :

— Ձե՛մ կրնար . . . պահ մը . . .  
 ձեռագրերը տեսնել, կը հարցնէ Լաբուա  
 հեկեկալով ու տղայի մը երկչոտութեամբ :  
 Հիւկոյի պիւրկարեան երկաթեայ  
 ձեռքը իջաւ ձեռագրերու սետրերուն  
 վրայ, եւ, թօնով մ'որ ցումբութենէ  
 զերձ չէր՝

— Ո՛չ, ասիկա կարելի չէ . . .  
 գոռաց Վիկտոր Հիւկոյ. ենթացեցէք  
 թէ ասիկա ձերմեկ թուղթ ըլլար,  
 J'y ai mis mon nom. . . Cela suffit . . .

Ալպէս Լաբուա պիտի ուղի որ,  
 այդ պահուն, զեպինը բացուէր իւ ինք  
 հոն թաղուէր, ա՛յնքան վրդոված կըզ-  
 զար ինքզինքը իր բանաստեղծը եւ իր  
 աստուածը վերադարձ ըլլալուն համար,  
 եւ թէ ինչպէ՞ս քաւել հիմայ իր ձախա-  
 լեր վարմունքը :

Չըջու՛մի ակնարկ մ'ըրաւ անոր եւ  
 պայմանագրութիւնը բռնելով՝ անմի-  
 ջապէս իր կնիքը գրաւ, Վիկտոր-Հիւ-  
 կոյի ստորագրութեանը քով :

Ու, տաղանդին ուժով, այնպէս  
 մ'եղաւ որ՝ այս գործը, որքան բոնաս-  
 տեղծին՝ նոյնքան եւ արդիւնաբեր եւ  
 զաւ հրատարակչներուն համար, միլիո-  
 նի մը նման բան մը :

Ո՛չ, ասխորձակներ մի՛ սրէք,  
 խեղճ հայ հրատարակչներ :

Սպանիական զղեակն է այս ձեղի  
 համար, չէ՛ . . .

Ս. Օ.

Աւասիկ հասուած մը այդ յառա-  
 ջարանէն, ինչս հաւատարմութեամբ  
 նարաւ :

**Է Ն**

. . . . կարգ մը փիլիսոփաներ, ու-  
 մանք մարդասիրական զգացումներէ  
 մղուած, կը յամտին կասկածոտ ըլ-  
 լալ՝ այսպէս պատճառաբանելով .

— Բացատրեցէք մեզի չարք եւ մեղք  
 հաւատանք : Մեզի ըսէք թէ ի՞նչ է  
 վաղը, ի՞նչ է սարդը, ի՞նչ է պա-  
 տեթա՞մը, ի՞նչ է զիշերը եւ ի՞նչ է

կեանքը որ իր սնունդը կ'ունէ մահէն .  
 ըսէք թէ ի՞նչ է պատճառը տառապան-  
 քին եւ սխալանքին, եւ մենք պիտի  
 հաւատանք : Աստուած մը՝ որ կ'ստեղծէ,  
 եւ որ չարք թուլատրէ, անհասկանալի  
 է : Չարք կայ . այդ Աստուած ոչ զոյ :

Կընդունիմ թէ ստեղծող եւ չարք  
 թուլատրող Աստուած մը անհասկանալի է :  
 Նախ քաննք անհասկանալիին ի-  
 մասար, իր փաստմի առարկայ մը :

Եթէ կը բաւէ որ բան մը գոյու-  
 թիւն չունենալու համար անհասկանալի  
 ըլլայ, փաստողները իրաւունք ունին :  
 Բայց, եթէ անիմաշիւն կրնայ  
 գոյութիւն ունենալ՝ ասոնք իրաւունք  
 չունին :

Ի՞նչ ենք .  
 Անհունը զիտականորէն ապացուց-  
 ուած է . հարցուցէք ալճէպարին թէ  
 ի՞նչ է անհունը .

Անհասկանալին է ան :  
 Ուրեմն անհասկանալին կրնայ գո-  
 յութիւն ունենալ՝ քանի որ գոյութիւն  
 ունի արդէն :

Աստղագրող երկնակամարին նա-  
 յեցէք, եւ զայն կը տեսնէք. ճանճ  
 մ'առէք՝ եւ կը շօշուփէք զայն :

Եթէ անհասկանալին կայ, ի՞նչ կա-  
 պացուցանէ այս փաստը :  
 Աստուած անհասկանալի է . ուրեմն  
 ան ո՛չ իցէ :

Ո՛չ բնաւ :  
 Չարք՝ անհասկանալի ըլլալով, բան  
 մը փաստած չըլլար Աստուծոյ գոյու-  
 թեան դէմ :

Ոչ ոքի տրուած է հասկնալ թէ  
 ի՞նչ է Աստուած, բայց ամեն ոք կա-  
 րող է ըմբռնել ինչ գոյութիւնը :

Ամեն ոք կարող է ունենալ ջուրին  
 կաթիլը՝ բայց ոչ ով կ'անը :

Եթէ կարենայի չարք բացատրել,  
 պիտի կրնայի բացատրել էն, եւ եթէ  
 կարենայի բացատրել էն՝ ես ալ Աստ-  
 ուած կ'ըլլայի :

Կոյրը արեւին դէք. անիկա չի  
 տեսնիր արեւը, բայց կ'զգայ անոր գո-  
 յութիւնը :

— Նայեցէ՛ք, պիտի ըսէ, ջերմու-  
 թիւն կ'զգամ կոր :

Եւ այսպէս է որ մենք ալ կ'զգանք՝  
 ատանց թէպէս զայն տեսնելու՝ Արարի-  
 չը, որովհետեւ Աստուածային ջերմու-  
 թիւն մ'ալ կայ :

Չարք, ուրեմն, չէ կարելի ողջ-  
 մտորէն իր փաստ բռնել մեզի. չարք  
 մասն է անհասկանալիին, եւ երբ կա-  
 րենաք ինձի ըսել թէ ի՞նչ է անհունը,  
 ես ալ կարող պիտի ըլլամ ձեզի բա-  
 ցատրել անհասկանալին :

Աստուծոյ գոյութիւնը հաստատել՝  
 այո՛. բացատրել զայն, ո՛չ :

Վիկտոր Հիւկոյ

Ն Ա Մ Ա Կ Պ Է Յ Ե Ր Ո Ի Թ Է Ն

**ԱՐՃԱՄԱՐՅՈՒՄ ԴԵՄՔԵՐ**

Ասկից առաջ Սիրուած դէմքերու  
 վրայ կը գրուէր, սակայն այժմ պիտի  
 սկսիմ « Արճամարչուած դէմքերու » շարք  
 մը ներկայացնել « Արճարոյ » ի ընթեր-  
 ցողներուն որոնք կը յուսամ որ գոհ պի-  
 տի մնան :

Ես՝ Ս տարիի չափ Երուսաղէմ ըը-  
 նակած ըլլալով, Վանական կեանքը  
 լաւ մը ուսումնասիրած եմ, թէ ի՞նչ  
 միջոցներով եւ ապիկար մարդիկ վարդա-  
 պետ եղած են, թէ ի՞նչ միջոցներով  
 պարզ եւ աշխատաւոր միաբանք. աղ-  
 զեցիկ զիրքեր գրաւած եւ ահադին հա-  
 րատութեան տէր եղած են :

Ասոնցմէ առաջին սեղը կը գրաւէ  
 Աւեսիս Թաճեան ըսուած անմտօթ ա-  
 բարածը՝ որ վանքին պատուհասը եղած  
 էր. չեմ գիտեր ի՞նչ կերպով կը յաղթի  
 Երուսաղէմի վանքը մտնել եւ Վեհա-  
 պետեանի քով փոքրաւոր կ'ըլլայ, ուր  
 Պատրիարքէն երես տեսնելով՝ աղբեցիկ  
 զիրք մը կը գրաւէ, այնպէս որ Եպիսկո-

պոսք եւ Վարդապետք իրմէ կը վախ-  
 նային :

Ասկից առանձնակ մը տարիներ առաջ  
 իր գործած մէկ անբարոյական ընթաց-  
 քին վրայ, վանքէն տրտաքսեցին հե-  
 տեւեալ պարագաներու ներքեւ :

Ինչքան մը, կնիկ մը բերել կու-  
 տայ Պատրիարքարանի ներքի դռնէն,  
 որպէսզի իր անասնական կիրքը յաղե-  
 ցրնէ, սակայն չը յաղթիր, ուրիշ Ուր-  
 ֆացի միաբան մը տեսնելով, կնիկը  
 գուրս կը վանաւ : Աւեսիսը կը յորձա-  
 կի խեղճ միաբանին վրայ եւ լաւ մը կը  
 ծեծէ, աղուն ձայնէն կ'արթնան վան-  
 քի վարդապետները եւ պատրիարքարան  
 կը խուժեն, Աւեսիսին ձեռքը կը կա-  
 պեն գիտէք թէ որոնք. Աւեսիսին այժ-  
 մու մտերիմները բողոքականի Գայր-  
 ձեան եւ Նշանեան Մետրոպոլիտանապետ-  
 ները. եւ վանքին բանտը կը թիմեն  
 (\*) եւ հետեւեալ ասուա Յուպէ կ'իջե-  
 ցնեն, սակայն Յարութիւն Պատրիարք  
 ասանց Աւեսիսի չը կարողանալով ապ-  
 ըրիլ, զանազան էնթերթերով վերադառնալ  
 վանքը կը վերադարձնեն միեւնոյն պաշ-  
 ստով :

Այս վերջին տարիներս, Պատրիար-  
 քութիւնը ինք կ'ընէր, վանտածը վան-  
 տուած, ընդունածը ընդունուած է, ամ-  
 բողջ վանքը իրմէ կ'ստիմ ունի Միւս  
 պաշտօնեաները. լուսարարպետ, փոխա-  
 նորդ անուանական պաշտօնեաներ են,  
 ընդարձակ պատրիարքարանը այս վասին  
 յանձնուած է, բոլոր բանալիները իր  
 քով են, ուղածը կը ծախէ, ուղածը կը  
 գողնայ քանի որ արձանագրուած չեն,  
 վանքին ձեռք միաբանները կ'ըսեն թէ՛  
 այս անմտօթը որ Չնքուչէն բոսիկ ու-  
 ղով եւ անվարար վանք մտած էր, այ-  
 ժմ շնորհի Յարութիւն Պատրիարքին է  
 — Տղար սովորեալ տէր եղած է :

Մանօթ կուսակցութեան խնդրոյն  
 մէջ այս սրկիւն մեծ զեր ունեցաւ  
 կարող մը վերադարձը ընկերներով որոնց  
 վրայ կարգաւ պիտի գրեմ :

Ո՛վ վարդապետք եւ միաբանք Ե-  
 րուսաղէմի, ինչո՞ւ տակաւին թուլցած  
 կը մնաք, ինչո՞ւ սրկիւն եւ մատնիչ  
 փոքրաւորի մը գերին եղած էք, ի՞նչ  
 բան է կը վախէք. վարդապետք մը  
 այդ զազիր միջբողբ եւ պիտի տեսնէք  
 թէ՛ խաղաղութեան եւ Եղբայրութեան  
 նուիրական գրօջը պիտի ծածանի Ձեր  
 գլուխներուն վերեւ :

1908 Սեպտ. 27 Ա.ՉԱՏԱԿԱՆ ՄԸ

Յ. Գ. Չարմաշալին այն է որ իր Ե-  
 րուսաղէմի պատուիրակ, այս սրկիւն  
 եւ իր արարածը՝ Իզմիրեան Սրբա-  
 գանին ընկերացաւ մինչեւ Պէյրութ :

ՆՈՅՆ

(\*) Պոսեցիք կրնան ընդարձակ սեղե-  
 կութիւն ստանալ Նշանեան վարդապե-  
 տէ որ Պօլիս է այժմ :

**Ա.Չ.Գ.Ա.Տ.Ի.Ն**

**ԼՈՐՐՅՐ**

**ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ**

« Արեւելք » կը զրէ թէ՛ Հ. Յեզ.  
 Գալանցու թիւնը իր սպայակոյտովը  
 Խաղիւզ փոխադրուած եւ մեծ մի-  
 թիւն կը գումարած է :

— Ընկերս՝ Հնչակեաններն ալ  
 Սամաթիոյ մէջ իրենց Եօթերորդ-  
 միթիւնը գումարած են, ուր լսու-  
 սած է Պ. Սապա—Իսիլեան :

Խ. Խ. Սապարապ եւ անօգուտ  
 ցուցամուլութիւնները Ե՛րբ պիտի  
 վերջ գտնեն արդեօք :

ԵՐԵՍՓՈՒՍԱՆ

— Իշմիրի հայերը Օսմ. Խոր-  
 հըրդարանին համար իրենց կողմէ  
 երեսփոխան անգամ ընտրած են ծա-

նօթ փաստարան Սէրովաէ էֆ. Դա-  
 լիթեան : Ընտրութեան եղանակին  
 գէ՛մ տրտունչներ կը յայտնուին եւ-  
 զեր, առարկուելով թէ՛ Իզմիրի ամ-  
 բողջ հայութիւնը չէ՛ մասնակցած :

**ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ**

— Պատրիարքական փոխանորդ  
 Գեր. Տ. Նիշիէ Եպիսկոպոս Դուր-  
 եան յատուկ շրջաբերականով մը կը  
 ծանուցանէ թէ՛ « Հայուհետց Ըն-  
 կերութիւնը » վերակազմուած է :

**ՈՏՆՁԻՈՒԹԻՒՆ**

— Հնչակեան կուսակցութիւնը  
 Տեղապահ Սրբապետին զիբ մը գրած  
 և հարցուցած էր թէ՛ Տիրայր վար-  
 դապետ երբ չորս հինգ անգամ Օր-  
 մանեանի տունը գացած է, Պատ-  
 իարքարանի՞ կողմէ է, ինչպէս յայ-  
 տարարած է ինք : Եւ թէ՛ Եկեղե-  
 ցական Երեսփոխաններու ընտրել-  
 եաց ցուցակին պատշաճութեան  
 մէջ պատասխանատուութեան բաժին  
 մը ունի :

Տեղապահ Սրբապետին հրամա-  
 նով այս պաշտօնակաճ հարցերուն  
 պատասխանուած է թէ՛ իր յանձնա-  
 րարութեամբ գացած է Օրմանեանի  
 լնակարանը, և թէ՛ Եկեղեցական  
 Երեսփոխաններու ընտրելեաց գոր-  
 ծին մէջ պատասխանատուութեան  
 բաժին մը չունի :

Ի. Խ.— Այսպէսով Տիրայր վար-  
 դապետին մեղքերը կը քաւուին ու  
 անկարծ կ'արձակուի, ու գործին  
 մէջ եթէ մեղաւոր մը կը մնայ, այն  
 ալ Հնչակեան կուսակցութիւնն է՝  
 որ իր սահմանները մոռնալով կըեր  
 մը դատուելու կը ձեռնարկէ, ինչ որ  
 Պատրիարքարանի իրաւասութեանց  
 սահմաններուն մէջ ոտք դնել կը  
 նշանակէ :

**ԿԻՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՔԻՆ**

— Մանգուճի կիներու շարժա-  
 կանութեան վրայ լսուելով կ'ըսէ թէ  
 Ֆէրիզիւզի և Տօլապետէի կողմը  
 աղբին կարօտ դաւակներուն օգնելու  
 համար « Կրթասէր Տիկնանց Խնամա-  
 կալութիւն » մը կազմուած է :

— Բաղէշէն թղթակից մը շատ  
 տխուր գոյներով կը նկարագրէ  
 սեղոյն հայերուն վիճակը և կ'ըսէ  
 թէ՛ Սահմանադրութիւնը իրենց հա-  
 մար օգտակար ըլլալէ հեռի մնացած  
 է, և իր գրութիւնը կ'աւարտէ :

« Չարիքները վտանանակ մեղմա-  
 նալու, կը սաստկանան տակաւ :  
 Միւլթեղիմնիւր գիւղերու մէջ հեզ-  
 նօրէն « Եղբայր ենք », հաւասար ի-  
 բրատուր պիտի վայելենք » ըսելով  
 իր տասնորդ ժողովրդեան հետ  
 կէս կը բաժնեն արմտեաց հասոյթ-  
 ները :

**ԳՊՐՈՑԱՍԷՐԸ**

— Գաւառական վարժարաննե-  
 րու Ուսուցչուհիներ պատրաստուելու  
 համար 1879ին կազմուած և 1865ին  
 լուծուած « Գրոցասէր Տիկնանց »  
 Ընկերութիւնը վերակազմուած է,  
 Իերայի արհեստանոցին մէջ Տիկնե-  
 ներէ բաղկացած գումարումով մը :

**ՄԻԱՑԵԱԼԸ**

— Միացեալ ընկերութեան կազ-  
 մութեանը համար գումարուած ընդ-  
 հանուր ժողովը, Ընկերութեան Հիմ-  
 նադիր ժողովի անդամներուն ընտրու-  
 թեան ձեռնարկած՝ և 48 հոգի ըն-  
 տրած է իր այն :

(Մ. խ.) Մէկ քանիներու խնդրանաց վրայ կը փութանք յայտարարել թէ՛ Մենք ամենէն շատ համակրող մը կը մնանք Միացեալ ընկերութեանց, սակայն յարմար կը դատենք և կը պահանջենք որ եգիպտոսի մէջ միացեալին համար ստորագրուած գումարները առանց բացառութեան Հ. Բ. Ը. Միութեան սնտուկը հաւաքուին, և պէտք եղած ատեն՝ անկէ ուղղի Միացեալ ընկերութեան անմիջական պէտքերուն անհրաժեշտ եղող գումարները:

Չենք կարծեր որ մեր այս առաջարկին ու պահանջման դէմ առարկութիւններ ըլլան ստորագրողներու կողմէն, որովհետեւ Միացեալը, ինչպէս նաև Հ. Բ. Ը. Միութիւնը՝ կուսակցական քաջքուսէրու պէտք չէ՛ որ ենթարկուին. այսինքն զուտ Հայկական մնալու են:

Այսպիսի պահանջ մը ընելու պատճառներ ունինք, զորս այժմէն հրապարակ զենքը կանխահաս է:

Պատրիարքարանի գործակատար Գամէր էֆ. Նիրինեան Դատական նախարարին յանձնած է Տեղապահ հօր մէկ պաշտօնագիրը, որով Տաճար վարդապետը կազարկը կը հռչակէ, և իրաւունքէ կը զրկէ Եկեղեցական սքեմ կրելու:

Դատական նախարարը կրօնից Տեսչին հրամայած է թաղիքին համեմատ հարկ եղածը ի գործ զենել Տաճարի մասին:

Վարդապետներու միութիւնը Պատրիարքարանի մէջ գումարուելով, եկեղեցականութեան արատ բերող պաշտօնեաները պիտի վտարել իր մէջէն (Մ. խ.) Եկեղեցական հայրերը ինքնադատակցութեան ամենէն գեղեցիկ օրինակը տուած կըլլան, եթէ իրենք զիրենք ալ մեծ մասամբ վտարելի նկատեն:

Մշակ իր մամուլի տեսութեանց մէջ կը նկատէ Դաշնակցութեան «նախազգուշացումը» և հետևեալ եզրակացութեան կը յանդի:

«Կ. Պոլսի թերթերի մէջ տպուած է Դաշնակցութեան Կօմիտէտի մի նախազգուշացումը, որով յայտարարուած է թէ՛ Դաշնակցութեան անունով խաբեարարութիւն անողները, դրամ շորթողները, զեղծարարները խտտագոյն պատժի պէտք է ենթարկուին»:

Եկեղեցիկ նախաձեռնութիւն, կըսէ Մշակ: Բայց պէտք է այնպէս լինել որ այդ նախազգուշացումը լոկ ձեւի և մարդկանց աչքին քող փնջու համար արված չի լինի: Նոյնպիսի յայտարարութիւններ արեւց անցեալ տարի Դաշնակցութիւնը և մեր մէջ, բայց վերջը յայտնվեց որ Դաշնակցական գործիչներին մընք՝ Ձալլատեան, որ դրամ շորթեց Ալեքսանդրապոլում Բաղդասարեաններին, հակառակ նոյն իսկ յայտարարութեան, մինչև այսօր էլ աղաւ համարձակ ապրում է և իր դրամաշորթութեան պատճը վայելում:

Չը պէտք է յայտարարել մի բան որ մտադրութիւն չկայ կատարել:

**ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ**

Շնորհակալութեամբ ստացանք, Տիարք Գրիգոր Հացագործեանի և Յակոբ Երզնկացեանի միջոցաւ Հարարի մէջ. ի նպատակ արքիւրի սովեցող եղած հանգանակութեան արդիւնքը որք հետեւեալներն են.

Եթովպական սուլար Տիարք Մէմէրճիպաշեան եղբարք 15, Ձատիկ Ստեփանեան 10, Ոմն 10, Հ. Մօհամմաթ 10, Յակոբ Երզնկացեան 10, Ղազար Գասապեան 10, Հըրանդ Մինասեան 5, Գրիգոր Հացագործեան 5, Միսաք Բարուսեան 5, Գրիգոր Երզնկացեան 3, Ոմն 3, Յարութիւն Գասապեան 2, Յակոբ Սրեան 2, Ձաւէն Հապէշեան 2, Ստեփան Տարաբեան 2, Կարապետ Տէօքմէճեան 2, Յովհաննէս Գասապեան 2, Փէթրո Վազիթիս 2, Գէորգ 2, Նիկողոս Պալպալեան 2, Աւետիս Պորուճեան 1)2, Ազն. Տիկնայք. Անժէլ Յ. Երզնկացեան 9, Հաճի Հանում Արքաճեան 8, Վարդուհի Թէրզեան 5, Նոյն մի Գ. Հացագործեան 5, Մարիցա Գասապեան 5, Նարթուհի Տէրաբեան 3, Ձապէլ Գ. Երզնկացեան 2, Նուրիցա Գասապեան 2, Տէր եւ Տիկին Միխալի 1:

Չգալուն փոքրիկներ. Վահան Յ. Երզնկացեան 2, Սիրանոյշ Գ. Հացագործեան 1:

Գումար 1245.50 դրամ. Նոյնպէս շնորհակալութեամբ ստացանք Աղէքսանդրիայէն Տիարք Ե. Պաթմանեանէ 100 դրամ. Տ. Սրապիտնէ 97.50 և Ե. Եօրանէ 97.50 դրամ. որ կը նուիրեն փոխան ծաղկեպտակի, Տիարք Հաճաթեան եղբարք, հանգուցեալ մօր, Իսկուհի Հաճաթեանի յուշարձանի բացման և հողի հանգստի արարողութեանց առթիւ:

Ի զիմաց Հանդ. Մանախմբի Գ. Մ. ՊԵՂՊԵՆԱՆ

**ՏԵՂԱՍԱՆ ԼՈՒՐԵՐ**

— Բ. Խտիվը երկու օրէ ի վեր Մօնթաղաի պալատը կը մնայ:

— Սուտանի ընդհանուր կառավարիչ Վինկաթ բաշա, և Գահիրէի ոստիկանութեան հրամանատար Մէնս Ֆիլա բաշա երէկ Գահիրէ ժամանեցին Ընդհանուր հրամանատար Սըր ձօն Մեքալիի ղեկավարութեամբ կայարան դնայած էր Սէրտարը զիմաւորելու համար: Նոյնպէս Գահիրէի ոստիկանութեան պաշտօնեաները կայարանը կը դտնուէին Մէնսֆիլա բաշան բարեկէլու համար:

— Մինեէի բնակիչներէն պատգամաւորութիւն մը Գահիրէ եկած է, Ազգայնականներու պետ Մուհամէտ պէյ, Ֆէրիտէն խնդրելու որ իրենց գիւղաքաղաքին մէջ քաղաքական ասենախօսուելիւն մը ընէ:

Ֆէրիտ պէյ ընդունած է անոնց առաջարկը:

— Կիրակի գիշեր ի Խան խալիլ յոյն գոհարավաճառ Պ. Տիմիթիի խանութը գողեր մանելով 300 ոսկույ արժէքով գոհարեղէններ վերցուցած են. կէմէլիլի ոստիկանապետը և հրամանատար Գարթիյէ տեղւոյն վերայ քննութիւն կատարած են:

**ՀԵՌԱԳԻՐ**

— Սօվիա 1 Հոկտ. — Ռուսաճորի մէջ գոլերայի երկու դէպք պատահեցաւ:

— Բարից 1 Հոկտ. — Ճիւղարիւն ստացուած հեռագրի մը համաձայն Մենէլիֆ Կաշար կարաւանաւոր եղած է. Ռուս Տէֆա Ասիս Ապապա կանչուած է գաւաճառակն քաղաւոր պատկերը համար:

— Իգլիթ 1 Հոկտ. — Համիսիյէ Ընկերութեան պատկերող շոգեկարի լաշխումի կասառուտ ամբոխը կասողած ընկերութեան կեդրոնաւորը և նախաձեռնողը կրակի տուաւ:

— Բէքերայուրկ 2 Հոկտ. — Ռուսիս յիշատակագիր մը որից Պուլկարիոյ, և կառաջարկէ որ երկուսը իրար հարցը Պերիլիի զաշնագիրը ստորագրող Պեսոսեանց և կասառուրեանը յանձնէ:

— Կ. Պոլսի 3 Հոկտ. — Խորհրդարանը որ նոյնիման 15 ին պիտի գումարուի, հետզհետէ կը հաստատուի թէ՛ Դեկտ. 15 էն սուսը չ'պիտի կրնայ ինչի ունեւայ գումարուի:

— Սօվիա 5 Հոկտ. — Իշխան Էրսիլեան իր Պոսարէշի վերադարձին, նախարարներու հետ ողորակի Թրեւոյա զեպք:

— Ռեճ ՍՏԵՆ. — Պուլկարիոյ անկախութիւնը և իշխանապետութիւնը քաղաւորութեան վերամուկը այսօր հոյակոտեցար Թրեւոյայի մէջ, որ նախկին Մայրաքաղաքն է:

— Սօվիա 5 Հոկտ. — «Կեցցե՛ Պուլկարիոյ Ձար» աշխատակցութիւնը անկախութիւնը հոյակոտեցար:

— Կ. Պոլսի 5 Հոկտ. — Ժամը 3 ին պաշտօնակալ զեկուցում ստացաւ Բ. զուրը. նախարարաց ժողովը երկու յիս պիտի գումարուի:

— Բահիզ 5 Հոկտ. — Երուսաղիմ Մամուրը մօտաջոտ պատերազմի մը հարաւանակալ չի նկատեր:

**ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ**

Մուսի փողոց թիւ 6, Սիկերի մասնաձիւղին ֆոյ, Ժիւսքիի դիւնաց:

Կը գնէ և կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կաթուոր արժեթղթերը, մասնաւորաբար Բրէտի Ծօնսիէի հին և նոր, Բուժէլի երկաթուղեաց և Բանամայի Ֆրանսական վաւերացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի:

Արժեթղթերու արդի խիստ նպատաւոր գներէն կրնան օգտուիլ եգիպտաբնակ մեր ազգայինները մեզի գիմերով:

Մասնավճարներով — 25, 50, 100 կարելի է արժեթղթերու տիրանալ, և մտաշիլի պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կ'ընեն:


Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց, և տեսութեան ամեն կարգի Պոսոնը զեղչելու պատրաստակալութիւն:

Սեղանաւորական և Պօրսայի գորգառնութիւններ և այն կարգի գորգերու վերաբերեալ գաւառներէն եղած նախնարարութիւններ փութով կը կատարուին:

Բուժէլի երկաթուղեայ վիճակահանութեանց պանդ Օթօմանէն երաշխաւորեալ և վաւերացեալ քրօմ Կանէրի գնել ուղղութեամբ համար լաւ պատեհողութիւն մ'է մեզի գիմելը, որովհետեւ պանդ Օթօմանէն ուղղակի կատանաք յիշեալ քրօմակերպ:

12-50 ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

**ՎԱՐԴ ԵՒ ՁԱՐԴ**



ՏԻՊԻՆ ԼՈՒՍԻԷ Պ. ՉՕԼԱՔՕՕ ՄՈՒՍԻ ԵՐԱ ՄԻՒՋԵՅԻՆ ԼԱՏԻՆԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅԸ ՃԻՇՏ ԴԻՄՍՅՈՅ ԱՐՈՒՍԱԿԱՆ ԵՐԿԻՆԵՐՈՒ

**ԱՓԵԼՅՅԷ**

Հարսանեկան գեղակալ մարգենեւու շքեղ ծաղկեկողովներու, պատկերու և ընդօրի (շափղա) հրաշագեղ ծաղկերու ունենալու համար մի գիմէք այլուր:

Մեր գիմերը գիւրամատչելի են և ապրանքները անմրցելի:

Փորձի համար անգամ մը այցելողը, ապահովապէս մեր մնայուն յաճախողը պիտի ըլլայ:

Մեր տարիներու փորձառութիւնը այսպէս ըսել կուտայ մեզի:

31-43 ՏԻԿ. Լ. Պ. ՉՕԼԱՔՕՅ

**ԼՐԱՔԱՂ**

ՊՕԼՍՈՑ ԹԵՐԹԵՐԵՆ

— ՊՈՒԼԿԱՐԻՈՅ նախարարապետը Բարիցէն Սօֆիա վերադարձած է, Օսմ. կառավարութեան և Պուլկարիոյ մէջ պատահած խնդրոց համար լուրջ բանակցութեանց ձեռնարկելու համար:

Թուրք թերթերէն ոմանք՝ ըստ այդ աղբիւրէ առնելով կը ծանուցանեն թէ՛ Պ. Կէշուքի միջադէպին առթիւ առաջ եկած թուրքեպուլկար վէճը կարողադրուելու վրայ է:

— Միւլի Ալիէթի պետ Իպրահիմ բաշան ող կամ մեռած ձերբակալելու համար 1000 ոսկի պարգև խոստացուած ըլլալով, Տիարպէթի շրջակայքը գտնուող աշիւրէթները մեծ գործունէութեան մէջ են:

Երեք չորս օր առաջ հասած հեռագիր մը Իպրահիմ բաշայի մահը կը ծանուցանէր:

— Դաւառներու հայերուն կըրած զրկանքներուն և կեղծքումներուն վրայ խօսելով՝ «Իգտամ» կըսէ թէ՛ «Մահամադրական կառավարութեան խիստ զեկոյցները անբաւական են. պէտք է զինուորական ուժով պաշտպանել հայերուն կեանքը և ինչքը»:

— Չօրավար Նիքիֆօրով՝ որ Պէրլինի Պուլկար գործակատարն է, յայտարարած է թէ՛ «պէտք չէ կարծել որ երկաթուղիներու գրաւման խնդիրը Պ. Կէշուքի միջադէպին հետ կապ ունի»:

«Այս գործը կը վերաբերի այն խնդիրներուն, որոնք կապուած են թուրքիոյ մէջ իրերու նոր ընթացքին հետ և գործադուլին պատճառաւ այժմեութիւն ստացան»:

«Պուլկարիոյ իշխանապետութեան արժանապատուութեանը վերաբերող խնդիրները՝ որոնք բառ»

**ԵՂԻՇԷ ՓԱՄՊՈՒՔՃԵԱՆ**

ՇԱՐԷ ԱՊՏ ԷԼ ԱՉԻՉ ԳԱՐԱԳՕԼԻՆ ԴԻՄՍՅՈՅ

Միակ ներկայացուցիչն է Ազգային Հիւանդանոցի Սիկարի թղթերուն, կը վաճառէ մեծաքանակ և փոքրաքանակ:

1909 տարւոյ պատի և գրպանի օրացոյցներ գնելու համար միայն մեր վաճառատունը դիմելու է, և կամ դիւրութեան համար «Արշալոյսի» Տպարանը:

# ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՒՒՈՏԻ

## ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻՎԱՐԷԹԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱՎԶ - ԷԼ - ՊԻՐՔԷ ՓՈՂՈՑ ԷՕՂՊԷՔԻՅԷ



# ՍԵՓԱՎԱՆԱՏԵՐԲ

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

ՅԱՏԳԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է :

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գնեցող ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարէթներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամավաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին :

Պարտական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բոցի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է :

Մեր վաճառատունը վերջապէս, դիներու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէսներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անփոփոխ ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէն օրրոտօրէ մեծ քանակութեամբ և սուտար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

Լամէնթը զուտարուած ատեն օրակարգի պիտի անցնին, ասիկա ատուցմէ մէկն է :

« Պուլկարիա Թուրքիոյ Սահմանադրութիւնը համակրանքով ողջունեց, բայց կապած որ իր կենսական շահերը չ'փոխանդուին թուրք արմատական ազգայնական հոսանքներէն :

« Պուլկար կառավարութիւնը ժամանակը եկած կը համարի իր բոլոր տրամադրելի միջոցներով արժեքներ իր իրաւունքներուն այն մասը, որ կը վերաբերի քաղաքական և տնտեսական գործոց ապահովութեան » ու կը վերջացնէ . « Իւրաքանչիւր Պուլկար զիտէ թէ՛ այսօր կամ վաղը Թուրքիոյ հետ ծանր շրջանութիւններ կրնան ծագել » :

— Տրապիզոնի մէջ Սապահէտտին Իշխանի ներկայացուցիչ Շէվքէթ պէյ՝ բանաստեղծեամբ մը իշխանին քաղաքական ծրագիրը պարզած ատեն, թէ՛ երիտասարդ և թէ՛ ծեր թուրքերը պօռացած են թէ՛ « այդ քաղաքականութիւնը վրտանգաւոր է Թուրքիոյ » : Պա՛ մը մինչև իսկ վտանգի ենթարկուած է Շէվքէթ պէյի կեանքը :

Իշխան Սապահէտտին հեռագրով տեղեկութիւն ուղած է :

### ԱՐՇԱԼՈՅԾ

Ազգային, Իրական, և Բազաքական կիսամսեայ հանդէս, որ կը հրատարակուի ամէն ամսոյ 1 ին և 16 ին : Տարեկան բաժնեկիցին է արտասահմանի համար 7 ֆրանք, վեցամսեայն՝ 4 ֆրանք բացարձակապէս կանխիկ :

« ԱրՇալոյ » ը Ամերիկայի ամենէն անկախ անաչառ և անվախ հանդէսն է, որուն Խմբագիրը, միս միլիակ, կըցաւ արտասահմանական յեղափոխաբուծներ և գրամաշորթներ քօղամերկել ու շախշախել :

« ԱրՇալոյ » ը շարունակ կը հրատարակէ գեղեցիկ բանաստեղծութիւններ, ու Եւրոպական գրականութեան հոյակապ նորակէպեր : Իր թիւ Ժ . էն սկսեալ կը թարգմանէ « Եսթեր » անունով հայկական վէպը, որ 1901 ին լոյս տեսած է Անգլիոյ մէջ : Հեղինակը, Վարդենի կեղծանունով, մօրը կողմէն անգլուհի, հօրը կողմէն հայուհի մը, ակնատեսուած է 1896 ի կուտրած ին զոր նը :

կարագրել կը ջանայ անոր ամբողջ օրտակեղէքութեամբը : Վէպին հետոսը անհատ մը՝ կամ Ժողովուրդ մը չէ, այլ Սուլթանին արինապետութեան կարծիքը ԱրՇալոյրը :

« ԱրՇալոյ » ը բաժանորդագրուելու գործին թող դիմեն Խմբագրութեան կամ ուղղակի իր հասցէին :

Editor of ARDZIV  
P.O.Box 2285 Boston - Mass.  
Յ . Կ . Ապրտիկ ապարանքներ ու շաղրութեան չեն առնուիր :

### ԻՄԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

« Արշալոյ » ի տարանին մէջ, Շէրիք բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին հետեւեալ պրօշուրները :

- Ս . ՊԱԼԵԱՆ
- ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԱՏՆԵՆՆԵՐԸ
- Թիւ 1 Թրքուհին 50 սանթրիմ
- « 2 Հիւլէն 50 »
- Թիւ 3 պրօշուրը թէեւ հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատուներով զանց կընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար . դիմէ մէկ ֆրանք :
- Դիմել Արշալոյսի Խմբագրութեան զատ Հեղինակին հասցէին որ է .

Mr. A. Balian  
Le Caire

### ՍԱՐԳԻՍ Յ . ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեխանիկներու, փոփոխութեան և կապի վաճառատներու :

Տասնեկու տարիներ « Սինկըր » ընկերութեան զով մեքենայարարութեան զբաղելէ յետոյ, այժմ դիմավաճառ Զախարիա Դոնտտանթիուի զով պաշտօնեայ է զէնքերու և մեքենայարարարման ճիւղին մէջ :

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանքով, պաշտօնէն զուրս ունեցած իր պարապոյ ժամերը պիտի տրամադրէ կարի մեքենաներու, ֆօնօկրաֆիներու, կազի վառարաններու, նորոգութեանց և յարգարման :

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու՝ կրնան դիմել իր տունը Շարէ Մուհամէտ Ալի Թահթ-էլ Թապէն կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, և զարձեւ գիւրութեան համար քարթի քօտաւորով մը կրնան դիմել « Արշալոյսի » Տպարանին . նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը և Տունին թիւը :

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ և փորձեր կատարուելէ յետոյ :

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ :  
19 - 50

# ՍԻՆԿԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԵՐ

Պաղաքի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիոթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաթէ Տը Լա Պուրսի կից  
Հիւր ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկէրներն են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վիսյախան եւ մեքայնեղով վաճառուած, երաշխատուող մեխանիկներ :

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսի մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵՐԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՅԻՎԱԿԱՆ ՅԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշագրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկիի յասկանշիւն



Դին ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգութիւններ, Սինկէր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ :

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

### ՕԹԵԼ ՏՐԱՊԻԶՈՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՒԱ  
Քանթօ, Սուգուլ Մանկաի  
3 Թէթիկէթ-էլ-Գալլաճի փողոց 3  
Մանկաի Մզկիթի մէջ, Թիւ 3  
Պանդոկապետ - Մ . Գէորգեան

Կը յանձնարարուի արգոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը գտնուող և օգուէտ գիրքով սոյն պանդոկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն :

Դիմեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք :  
Գիները չափաւոր են . 28-55

### ՄԵՐ ԲԱԺՆՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և եթովպիոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին փութակցնել իրենց բաժնեկիցները, նկատելով որ տուրոյն իննսրորդամիսը կը թեւակոխենք :

Այսպէսով մեր յարգելի բաժանորդները մեզի խնայած կը լրան մասնաւոր դիմումներու առթիւ ըլլալիք ծախքերէն և ժամավաճառութիւններէ :

### ՆՊԱՐԱՎԱՃՅԱԹ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԲ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբոսն վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութեան եւ մաքրութեան շնորհիւ մնայուն գիրք մը բոնած է տարիներէ ի վեր :

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատեղոյն մէջ :

Մեր յաճախորդները գոհ թողելու նպատակաւ՝ սպասելի ապրանքներու ընտրութեան եւ գնումին ատեն շատ խնամք եւ նոյն իսկ բժախնդրութիւն կը ընենք : Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է եւ մաքուր մեր քով :

Կշիռը, որուն համար ուրիշ շատ տեղեր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն առթած է . վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գոհ մնացած են :

Ձեր սուրին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար դիմեցէք ի Պապ-Էլ-Խալաբ՝ մեր վաճառատեղին և չ'պիտի զղջաք :  
16-41  
ԿԱՐԱՊԵՏ ԳՍԱՍՐՃԵԱՆ